



ԻՄ ՆՈՐ ԴՊՐՈՑՍ

Ներկայացնելով այն բոլոր փաստաթուղթերը, որոնք ճեմարանի քարտուղարությունը պահանջած էր մեզմե, իմ հին դպրոցես եւ պետական կրթական տնօրէնութենէն, Ազգ. Քարէն Եփփէ ճեմարան արձանագրուեցայ: Մեծ խանդավառութեամբ եւ հպարտութեամբ սպասեցի դպրոցի առաջին զանգը: Վիաւասիկ առաջին զանգը հնչեց եւ նոր տարեշրջանը աղօթքով սկսանք: Եօթերորդ կարգի ընկերներս արդէն ինծի ծանօթ էին ակումբէն, հետեւաբար երբեք օտար չգգացի: Բարձր տրամադրութեամբ ճեմարանի շրջափակէն ներս մտայ, զգացի որ այլեւս մանուկ չեմ այլ՝ պարմանուի դարձած եմ:

Շատ ուրախ եմ որ ճեմարանական եղայ, ուրկէ շրջանաւարտ եղած եմ ազգականներս ու բարեկամներս եւ այսօր փառք ու պատիւ կը բերեն այս դպրոցին:

Լոռի Պետրոսեան

Առակ ԱՅԾԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԵՐԸ Վարդան Այգեկցի

Անգամ մը այծերը հաւաքուեցան ու գայլերուն նամակ ուղարկեցին, թէ ինչո՞ւ մենք դարերով թշնամի ենք իրարու, եկէ՛ք սիրով ապրինք միասին ու խաղաղութիւն վայելենք:

Գայլերը ուրախացան, իրենց համաձայնութիւնը տուին ու շատ նուէրներ ուղարկեցին այծերուն, իսկ նամակին մէջ հետեւեալը գրեցին.

«Շատ ճիշդ որոշած էք, յարգարժան այծեր, մեր միջեւ խառնողը հովիւներն ու շուներն են, եթէ դուք գիրենք վռնտեք ձեր կողմերէն, մենք բարեկամներ կ'ըլլանք»:

Այծերը լսեցին գայլերուն խորհուրդը եւ վտարեցին հովիւներն ու շուները: Անոնք ազատութեան մէջ սկսան թռչկոտիլ, ուտել ամենահիթեղ խոտն ու խմել ամենալաւ առուակի ջուրը: Իսկ գայլերը հարիր օր սպասեցին, ապա հաւաքուեցան ու յարձակեցան յիմար այծերուն վրայ:

ԵՍ ԱԼ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԱՅ

Այսօր վերամուտին առաջին օրն է: Ես այս տարի Ազգ. Քարէն Եփփէ ճեմարան պիտի յաճախեմ, անցնող 9 տարիներուն ես Ազգային Միացեալ Վարժարանի աշակերտ էի: Ուրախ եմ, որովհետեւ ուրիշ միջավայր, ուրիշ կրթական օճախ մը պիտի մտնեմ, բայց նաեւ քիչ մը մտահոգ եմ, որովհետեւ պիտի ծանօթանամ նոր տնօրէնի, ուսուցչական կազմի, տարբեր դասանիւթերու: Երբ հին ընկերներուս տեսայ միխթարուեցայ, համոզուեցայ որ շուտով պիտի ընտելանամ եւ վարժուիմ իմ այս նոր միջավայրին:

Յուսամ այս տարի յաջողութեամբ լեցուն տարեշրջան մը ըլլայ:


Քրիստ Պարտաքճեան



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՅ՝ ՈՒԻՑԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԲԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒԵՅ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՒԵԱՆ



Ներկե՛՛ նախասիրած գոյներով



Մտածենք


Կրնա՞ս վարի տախտակը ամբողջացնել 1, 2 և 3 թիվերով: Իրաքանչիւր շարքի եւ սիւնակի մէջ պետք է գետեղել այս թիւերը՝ առանց զանոնք կրկնելու: Թիւերուն շարքը կարելուր չէ:



Կրնա՞ս գտնել սանտրին հասցնող ճամբան:



Ներկե՛՛ նախասիրած գոյներով



ԴՊՈՎՈՒՄՈՒՄ



Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու կերպարները:



ՈՍԿԻ ԿԱՐԱՍԸ

Յովհաննես Թումանյան

Ես մեր ծնողներն լսած եմ, մեր ծնողները՝ իրենց պապերն, անոնց պապերն ալ իրենց մեծերն, թե ժամանակին կար աղքատ հողագործ մը, որ ուներ միայն զոյգ մը եգ եւ մէկ օրուան մէջ իսկ հերկուելիք արտ մը:

Զմրան ընթացքին այս խեղճ գիւղացիին եզները կը մեռնին: Գարնան, երբ վարուցանի ժամանակը կու գայ, եգ չունի որ արօրին լծէ ու արտը հերկէ: Հետեւաբար արտը վարձու կու տայ իր դրացիին:

Դրացին երբ արօրը կը վարէր, խոփը արգելքի մը կը հանդիպի. կը կարծէ որ խոշոր քարի մը դեմ եկած է, մինչդեռ երբ քիչ մը հողը կը փորէ, կը տեսնէ որ կարաս մըն է՝ մէջը լեցուն ոսկի...: Կը ձգէ արօրն ու կենդանիները, եւ կը վազէ դեպի գիւղ՝ հողատիրոջ տունը:

- Հէ՛յ, աչքդ լո՛յս եղբայր,- կը գոչէ,- գիտե՞ս ինչ, քու արտն կարաս մը ոսկի էլաւ, եկուր ա՛ն:

- Չէ՛, այդ իմս չէ որ,- կը պատասխանէ արտին տերը,- դուն հողին վարձքը տուած ես, դուն կը վարես ու կը ցանես, ուրեմն այդ հողէն ինչ որ ելլէ՝ քուկդ է: Ոսկի՞ էլեր է, թո՛ղ ըլլայ, այն ալ քուկդ է:

Կը սկսին վիճիլ. մէկը կ'ըսէ՝ «*Հողին տերը դուն ես, քեզի կը պատկանի*», միւսը կ'ըսէ՝ «*Ո՛չ, արտը վարձողը եւ աշխատողը դուն ես, դո՛ւն պէտք է առնես*»...: Վիճաբանութիւնը հետզհետէ կը տաքնայ, կը սկսին կռուիլ իրարու հետ: Վերջապէս կ'երթան թագաւորին, որպէսզի հարցը լուծէ: Թագաւորը կարաս մը ոսկիի խօսքը երբ կը լսէ, աչքերը կը փայլին: Անմիջապէս կը վճռէ.

- Ո՛չ քուկդ է, ո՛չ ալ անորը. իմ երկրիս հողէն ելեր է այդ կարասով ոսկին. ուրեմն, ինձի կը պատկանի:

Առանց ժամանակ կորսնցնելու, իր հետեւորդներուն հետ կ'երթայ արտ, որպէսզի շուտով հանել տայ կարասը եւ բերէ պալատ: Բայց երբ կարասին բերանը բանալ կու տայ, ի՞նչ տեսնէ.- կարասը լեցուն է օճերով...:

(Շարունակելի)

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ԻՆՉՈ՞Ւ ԿԱՐԳ ՄԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԶՄԵՌՆԱՔՈՒՆԻ ԿԸ ՄՏՆԵՆ

Բոլորին յայտնի է, որ որոշ կենդանիներ, օրինակ՝ արջը կամ ոզնին, ձմեռնաքունի կը մտնեն: Անոնք այսպես կ'ընեն, որպեսզի ձմրան ցուրտ եղանակին անօթութիւն չզգան: Ձմրան միջատներ չկան, որոնք ոզնիին սնունդի հիմնական օրաբաժինը կը կազմեն կամ՝ միրգեր ու կաթնասուններ, որոնք որպէս կեր կը ծառայեն արջերուն: Քնացած ժամանակ կենդանիներուն օրկանիզմը նոյն ձեւով կ'աշխատի, տաք օրերուն արթուն ժամանակ մաշկի տակ հաւաքուած իւղերուն հաշուոյն:

Անասունները ձմեռնաքունի կը մտնեն տաք եւ յարմարաւետ տեղերու մէջ: Ծառերու արմատներու տակ արջերը որջեր կը փորեն, իսկ ոզնիները՝ բոյներ:

Եթէ արջը բաւականաչափ ճարպային պաշար չէ կուտակած, կրնայ արթննալ եւ բարկացած ու անօթեցած անտառին մէջ անհրաժեշտ սնունդ կը փնտռէ: Այդպիսի արջերը թափառաշրջիկ կը կոչենք եւ շատ վտանգաւոր են:

ԻՆՉՈ՞Ւ ԳԵՏՆԱՌԻԺԸ ԳՈՅՆԸ ԿԸ ՓՈՒԵ

(Գետնառիծ) ոչ մեծ մողէզ մըն է, որուն մարմնին միջին երկարութիւնը 30 սմ. է: Անոր զարմանալի իւրայատկութիւնը մաշկին գոյնը փոխելու կարողութիւնն է: Գետնառիծի սովորական գոյնը մոխրականաչաւուն է, սակայն արտաքին գործօններու ազդեցութեան տակ կամ սողունին վիճակէն կախեալ կրնայ փոխուիլ՝ դառնալով դեղնականաչաւուն, մոխրաշագանակագոյն, մանիշակագոյն եւ նոյնիսկ՝ սէւ: Վախը, բարկութիւնն ու հանգստութիւնը կրնան ազդեցութիւն ունենալ Գետնառիծին գոյնի փոփոխութեան վրայ: Երբ ան վախցած է, մաշկին գոյնը աւելի բաց երանգ կը ստանայ, իսկ երբ բարկացած է՝ ընդհակառակը, կը մթնայ, յաճախ կը սեւնայ:

Ո՞ՒՐ Կ'ԱՊՐԻՆ ԹԵՒԱՏՆԵՐԸ (PENGUINS)

Թեւատները շատ հետաքրքրական արարածներ են: Թեւ գիտնականները իրենց թռչուններու շարքին կը դասեն, բայց այս կենդանիները բացարձակապէս չեն կրնար թռչիլ: Փոխարէնը անոնք շատ լաւ կրնան լողալ ու սուզուիլ:

Թեւատները ընդհանրապէս Հարավային բեւեռին մէջ կ'ապրին: Այս զարմանալի թռչունները երբեք չեն վախնար ցուրտէն, որովհետեւ պաշտպանուած են ճարպի հաստ շերտով ու շատ խիտ փետուրներով: Նոյնիսկ ամենացուրտ եղանակին, երբ քամին կը փչէ, թեւատին վրայի փետուրները անգամ չեն շարժիր: Ահա թէ ինչ ամուր կապուած են անոնք թեւատին մարմնին:

